«Էդիթ Պրինտ » հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ *Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը*

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ *<<Մասիս քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ Էմմա Վարդանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

1. Պետության դերը երեխաների իրավունքների պաշտպանության հարցում----- 4

2. ՄԱԿ-ի Կոնվենցիա---------- 10

3. Նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքները------- 13

4. Եզրակացություններ և առաջարկություններ---------- 14

5. Գրականության ցանկ---------- 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր շատ երկրներում վերապրում են համալիր, սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական փոփոխություններ, որոնք հատկապես անդրադառնում են հասարակության ամենախոցելի խմբի՝ երեխաների վրա: Ներկայումս, մեր երկրում ստեղծված իրավիճակը կապված Արցախյան պատերազմի, տարհանված երեխաների առկայության պայմաններում, ավելի արդիական են դարձնում երեխաների իրավունքների ու ազատությունների լուծման և պաշտպանության հարցերը:

Այս աշխատանքի մեջ ուսումնասիրվել է երեխայի իրավունքների, նրա ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը պետության և ընտանիքի շրջանակներում, պետության դերը նրա իրավունքների պաշտպանության հարցում, Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան և նախադպրոցական հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող մի շարք հարցեր:

Երեխայի անձի ձևավորումը սկսում է ծնված օրվանից և արդեն նախադպրոցական տարիքում նա ձեռք է բերում որոշակի նախադրյալներ սոցիալական փորձ ձեռքբերելու, սոցիալական անհատ դառնալու համար: Մանկությունն այն կարևոր շրջանն է, որի ընթացքում մարդը ձեռք է բերում անձնային հատկություններ, որոնք կողմնորոշում են նրա ապագան կյանքն ու գործունեությունն: Աշխարհի բոլոր երեխաները, անկախ սեռից, տարիքից, ազդեցությունից ու սոցիալական դիրքից, ունեն հավասար իրավունքներ: Պետությունն էլ պարտավոր է ապահովել այդ երկրում ապրող երեխաների իրավունքները: Երեխաների իրավունքների պաշտպանության հարցում մեծ է նաև ընտանիքի դերն ու նշանակությունը:

Միջազգային ասպարեզում երկրների հեղինակությունը կախված է նաև նրանցից, թե որքանով է կարողանում տվյալ երկիրը պաշտպանել իր երկրում ապրող երեխաների իրավունքները:

Երեխաները մեր ժամանակներում իրենց իրավունքների պահանջատերերն են և միաժամանակ կարիք ունեն սեփական իրավունքներն ու պարտականություններն իմանալու և պաշտպանված լինելու:

1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Պետությունը երաշխավորում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության

զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացի դաստիարակման առաջնահերթության սկզբունքների ապահովումը: Երեխան գտնվում է հասարակության ու պետության հավանավորության և պաշտպանության ներքո:

Երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունեությանն է ձեռքբերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ: **Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերով:** Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Պետությունը համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց և հասարակական միավորների հետ:

Երեխաներն ունեն համապատասխան իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, խնամակալների կամ հոգաբարձուների, ազգությունից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքներից:

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:

Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:

Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման և ամրապնդման իրավունք:

Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կեսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները:

Ծնողների կողմից երեխայի ուսման անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության դեպքում պետությունը ցուցաբերում համապատասխան օգնություն:

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի բռնությունից պաշտպանվածության իրավունք: Ցանցակած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ օրինական ներկայացուցչին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեություն մեջ ներգրավելու, այդ թվում թմրամիջոցների օգտագործումից:

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը հանապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտել իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխաների տեղեկատվության ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով: Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե այն ահրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխաների առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Արգելվում է առանց ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև տասնվեց տարեկան երեխաների մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսունական հաստատություն ընտրելու իրավունք: Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխաների անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ և այլն:

Յուրաքանչյուր երեխա ունի ծնողներին ճանաչելու և նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողնեից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները նպաստում են ընտանիքի վերամիավորմանը: Երեխաների խնամքն ու

դասիարակությունն իրականացվում է հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նարնք ստեղծում են անհրաժեշտ պայմամմեր երեխայի լիարժեք զարգացման, դաստաիարկության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի նախատապտաստման համար:

Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունը ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմինները օգություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին: Երեխայի բարեկեցությունն ապահովելու համար խրախսուվում է ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական, խորհրդատվական ծառայությունների գործունեությունը:

Երեխայի կողմից ՀՀ օրենսդրության խախտման դեպքում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները պատասխանատվություբ են կրում ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Ծնողների հետ համատեղ չբնակվող երեխան ունի նրանց հետ անձնական կանոնավոր փոխհարաբերությունների և ուղղակի կապերի պահպանման իրավունք՝ բացառությամբ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքով սահմանված կարգի:

Յուրաքանչյուր երեխա ծնողի մահման, ինչպես նաև դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում, անկախ բնակության վայրից, ունի ժառանգություն ստանալու իրավունք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգի:

Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք: Երեխայի ստեղծագործական հնարավորությունների զարգացման նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի, հեռուստահաղորդումների, մուլտֆիլմերի, թերթերի հրապարակումը ապահովում դրանց մատչելիությունը:

Արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող բռնության և դաժանության, պաշտամունք քարոզող, ընտանիքը վարկաբեկող, զանգվածային տեղեկատվության տարածումը:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարելի է կնքել նրա տասնվեց տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք:

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց և երեխայի փոհարաբերությունները իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա: Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակութուն և ուսուցում իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Առանց ծնողական խնամքի մնացած երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշպանության, խնամքի, դաստիարակաության իրավունք: Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը: Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնում երեխայի դաստիարակության հաղոդականության ապահովումը մայրենի լեզվով և այլն: Երեխայի տասնվեց տարին լրանալուց հետո, նա իրավունք ունի ապրելու ինքնուրույն, բավարար կեսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում:

Պետությունն ու նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխաներին երաշխավորում են անվճար մասնագիտական բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին կամ համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակա-կան կյանքին:

Հաշմանդամ կամ կերակող կորցրած երեխան ունի կեսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետությունը: Երեխան ունի նպաստ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու, ընտանիքի հետ վերամիավորելու անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները:

Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին: Ինչպես նաև երեխաների շրջանում պատերազմի և բռնության

քարոզչությունը: Արգելվում է մինչև տասնհինգ տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Ռազմական գործողությունների և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք:

Երեխան ունի անձի անձեռնամխելության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձեռբակալվել, խուզարկվել կամ կալանավորվել այլ կերպ քան սահմանված է օրենքով: Երեխայի ձեռբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնել ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին: Ազատազրկման դատապարտված ցանկացած երեխա ունի օրենքով սահմանված իր իրավունքները: Երեխայի իրավունքները պաշպանված են աշխատանքների պաշտպանության տարեկան ծրագրով սահմանված ժամկետում ու կարգով:

Տարեկան ծրագով նախատեսված աշխատանքների կատարման ծախսերն արտոցոլվում են համապատասխան տարվա պետական բյուջեի ծախսային հոդվածներում: տարեկան ծրագրի կատարման արդյունքով նախատեսված աշխատանքների թերակատարված մասը ներառվում է հաջորդ տարվա տարեկան ծրագրում: Տարեկան ծրագիրը ներառում է՝

ա) ծրագրի հիմնական խնդիրները,

բ) նախատեսված աշխատանքների ծավալները և իրականացման ժամանակացույցը,

գ) նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները,

դ) ծրագրի կատարման սկզբունքները և նախատեսված աշխատանքների իրականացման և դրանց ֆինավորման գործընթացի վերահսկողության կարգը և այլն:

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությանն արտացոլում է համապատասխան տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում: Սույն օրենքը խախտող անձինք, ինչպես նաև պետական մարմինները, պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱ

1948թ. միավորված ազգերի կազմակերպությունը /այսուհետ՝ ՄԱԿ/ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակեց և համաձայնեց, որ շատ մարդ օժտված է հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներով ու ազատություններով, մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ **երեխաներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք (հոդված 25):** Երեխաների համար առանձնահատուկ կերպով հոգ տանելու, նրանց աջակցելու ու պաշտպանելու անհրաժեշտությունը գիտակցվել էր նաև ավելի վաղ: 1924թ. Ազգերի լիգան ընդունել էր <<Երեխաների իրավունքների մասին>> հռչակագրիը, որը հայտնի է որպես Ժնևի հռչակագիր: Այս հռչակագրով առաջին անգամ ճանաչվեց և հաստատվեց, որ երեխայի համար գոյություն ունեն հստակ իրավուքներ:

Հաշվի առնելով երեխաների նկատմամբ առանձնահատուկ հոգածության անհրաժեշտությունը ՄԱԿ-ը 1989թ. նոյեմբերի 20-ին ընդունում է <<Երեխաների իրավունքների մասին>> կոնվենցիան: Այն միջազգայինորեն ճանաչված առաջին փաստաթուղթն է, որով ամրագրվում է երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակ: <<Երեխաների իրավունքների մասին>> կոնվենցիայի 4 հոդվածներ, որոնք հայտնի են որպես ողնաշարային սկզբունքներ, հատուկ ուշադրության են արժանացած: Սկզբունքի հիմքում ընկած հիմնական գաղափարը այն է, որ երեխաները անհատներ են.

1. **Առանց կտրականության**: Բոլոր երեխաները օժտված են նույն իրավունքներով և երբեք չպետք է ենթարկվեն կտրականության:
2. **Երեխայի լավագույն շահերը**: Երեխաների հետ կապված բոլոր գործողություններում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Բոլոր չափահաս մարդիկ պետք է անեն այն, ինչ լավագույն է երեխայի համար, որոշում ընդունելուց պետք է մտածեն, թե դա ինչպես կազդի երեխայի վրա: Երեխայի շահերը բոլոր դեպքերում գերակա են մեծահասակների, օրինակ՝ ծնողների, ուսուցիչների, խնամակալների շահերի նկատմամբ:
3. **Կյանքի ու զարգացման իրավունք**: Երեխայի տնտեսական ու սոցիալական

իրավունքների հիմքում ընկած բանաձևը սահմանվում է երեխայի կյանքի իրավունքն ամրակայող հոդվածում: Հոդվածը ոչ միայն խոսում է երեխայի ապրելու իրավունքի մասին, այլև սահմանում է նրա գոյատևման ու առողջ զարգանալու իրավունքը:

4. **Լսված լինելու իրավունք**: Կոնվենցիայի մյուս կարևոր սկզբունքը հարգանքն է երեխայի կարծիքի նկատմամբ: Կոնվենցիայում առանձնահատուկ ընդգծվում է երեխայի ընտանիքի դերը, նրա հեղինակության ու պատասխանատվության կարևորությունը: Հռչակվում է, որ երեխան ունի ոչ միայն ընտանիքի, լեզվի ու մշակույթի, այլ այդ լեզվի ու մշակույթի նկատմամբ հարգանքի իրավունք: Կոնվենցիան նաև կոչ է անում պետություններին օժանդակելու այն ընտանիքներին, որոնք չունեն իրենց երեխաների համար կյանքի արժանապատիվ մակարդակ ապահովելու հնարավորություն: Կոնվենցիան մեծ ազդեցություն է թողել ողջ աշխարհի վրա:

ԲՈՈՒԼԻՆԳ

Ծաղրանքն ու ստորացումները վաղուց են դարձել երեխայի կյանքի անբաժանելի մաս և տարիների հետ այս երևույթը ավելի ու ավելի է տարածվում: Արևմուտքում այս երևույթն անվանում են բուլինգ: Շատ ծնողներ կարծում են, որ դա այդքան էլ լուրջ խնդիր չի, սակայն բուլինգի հետևանքները կարող են լինել շատ ծանր ու անջնջելի: Բուլինգը բացասաբար է անդրադառնում ոչ միայն դրան ենթարկված երեխաների, այլև այն իրականացնողների վրա:

Բուլինգի են ենթարկվում հիմնականում այն երեխաները, որոնք չունեն ծնողներ, ժամանակավորապես կամ մշտապես զրկված են ընտանեկան միջավայրի, ընտանիքում ենթարկված են ֆիզիկական կամ հոգեկան բռնության, ենթարկվում են տնտեսական շահագործման, ունեն ցածր ինքնագնահատական և ագրեսիվ են, որևէ կերպ արտաքինով, հոգուստով, ֆիզիոլագիական առանձնահատկություններով առանձնանում են մյուսներից, ֆիզիկական կամ հոգեկան տեսանկյունից ավելի թույլ են, ինքնավստահ ու համարձակ չեն, կախվածություն ունեն ուրիշների կարծիքից:

Բուլինգ իրականացնողներ են համարվում այն երեխաները, որոնք սիրում են նեղացնել ու ստորացնել դասընկերներին, վատ են սովորում, գերակտիվ են, հակված են կոնֆլիկտների ու կռիվների:

ՀՀ-ում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ.

1. **Մարզային մակարդակ**: Մարզային մակարդակում գործում են ՀՀ մարզպետարան-ների աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքի

պաշպանության բաժինները, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների պաշպանության բաժինը:

Բոլոր մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքի պաշպանության բաժինների առջև դրված է հետևյալ խնդիրների լուծումը՝

- ապահովել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքի պաշպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը մարզերում,
- աջակցել ընտանիքում ապրելու և դաստիարակելու երեխայի իրավունքի ապահովումը,
- ապահովել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի իրավունքների պաշտպանությունը և կանխարգելել նման իրավիճում նրանց հայտնվելը,
- մշակել ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշպանությանն ուղղված պետական նպատակային արդարադատության ծրագրեր և ապահովել դրանց կատարումը:

2. **Համայնքային մակարդակ:** Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Երևան քաղաքում խնամակալության և հոգաբարձության մարմնին վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները: Նրանց խնդիրն է.
   - Երեխաների իրավունքների և շահերի պաշպանության ապահովումը:
   - Երեխայի ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը:
   - Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի իրավուքնների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում նրանց հրատապ օգնության

   անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը, ինչպես նաև ՀՀ օրենքներով նախատեսված այլ խնդիրներ:

Երեխան ծննդյան պահից ձեռք է բերում մի շարք իրավունքներ, որոնք պաշտպանված են ինչպես միջազգային պայմանագրերով, այնպես էլ ներպետական օրենքներով:

Երեխայի իրավունքի պաշտպանության դեպքում հիմնական պատասխանատություն կրողը պետությունն է: Սակայն երեխայի իրավունքը կարող է ոտնահարվել տարբեր օղակներում: Եթե, օրինակ, պետությունն է ոտնահարում երեխայի իրավունքը, հիմնական պահանջատերը կամ ապատասխանատուն դառնում է ծնողը, ով պետք է պահանջի իր երեխայի իրավունքը:

Նախադպրոցական տարիքում երեխայի անձնավորության ձևավորումն ընթանում է նրա սոցիալական զարգացման հետ և ուղղված է անձնային վարքագծի կարգավորման հոգեբանական մեխանիզմների ձևավորմանը: Սոցիալական զարգացման ընթացքում է զարգանում նախադպրոցական տարիքի երեխայի ինքնագիտակցությունը, որին հաջորդում է սեփական վարքը գնահատելու կորողության ձեռքբերումը: Սոցիալական զարգացումը սոցիալական փորձի ձեռքբերման գործընթաց է: Այն նպաստում է երեխայի կողմնորոշմանը հասարակական և հարաբերությունների բարդ համակարգում ինքնահաստատմանն հասակակիցների միջավայրում, ձևավորում է որոշակի դիրքորոշում արտաքին աշխարհի հանդեպ, նպաստում անձնային զարգացմանը:

Երեխայի սոցիալական պաշտպանության գործում պետք է միասնական աշխատանք ծավալվի օրենսդրական գործակալությունների, մասնագետների և կամավորական սեկտորի միջև: Այդ աշխատանքը պետք է նպաստի, որ երեխաները.

- լինեն ֆիզիկապես և մտավոր առողջ,
- առավելագույնս օգտվեն լավորակ կրթական հնարավորություններից,
- ապրեն ապահով միջավայում և լինեն վտանգից պաշտպանված,
- լսել երեխաներին և հաշվի առնել նրանց ցանկությունները,
- հնարավորություն տալ երեխաներին ծնողների և ընտանիքի ողջ անդամներին լիովին ներգրավել երեխայի պաշտպանության գործընթացին:

Բոլոր մանկապարտեզները, դպրոցները պետք է ստեղծեն ու պահպանեն ապահով միջավայր երեխայի համար և կարողանան կառավարել այն իրավիճակները, որտեղ առկա են անհանգստություններ երեխայի բարեկեցության վերաբերյալ:

3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ցանկացած քաղաքակիրթ երկրում գոյություն ունեն սեփական նորմատիվ փաստաթղթեը, որոնք թվարկում են երեխաների իրավունքները մանկապարտեզում: Մեր երկրում գործում է ընտանեկան օրենսգիրքը: Նախադպրոցական հաստատություններում երեխաների հիմնական իրավուքններն են.

- **Կրթություն ստանալը, ինչպես նաև ստեղծագործական և ֆիզիկական կարողությունների ձևավորումը և զարգացումը:** Ցանկացած նախադպրոցական հաստատություն պարտավոր է լրացուցիչ ուսուցում անցկացնել

երեխաների համար: Բացի մաքուր օդում գտնվելուց, խաղերի բացի, երեխային պետք է նպաստել մտավոր զարգացման ուղղությամբ: Նպատակն իրականացնելու համար մանկապարտեզներում աշխատող մանկավարժներն օգնում են երեխային բարելավել, աստիճանաբար բարդացնել խնդիրը:

- **Երեխայի մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացման համար մեծ նշանակություն ունի խաղը:** Այստեղ է, որ նա ստանում է հաղորդակցման հմտություններ: Նախադպրոցական հաստատություններում պարտավոր են ապահովել երեխայի կյանքի և առողջության պահպանումը: Անհրաժեշտության դեպքում երեխան պետք է բժշկական օգնություն ստանա:
- **Պաշտպանել չարաշահումից:** Պետք է ուշադրություն դարձնել խաղալիքներին և հիմնական հիգիենիկ պարագաներին: Դրանք պետք է համապատասխանեն հիմնական հիգիենիկ պահանջներին:
- **Երեխային պետք է ապահովել բարձրորակ սննդով:** Եթե երեխանն տրվել է սնունդը, որը ժամակետանց է, խախտվում է երեխաների իրավունքները և ծնողները կարող են բողոք ներկայացնել: Մանկապարտեզը, որը գնահատում է իր հեղինակությունը, միշտ համագործակցում է ծնողների հետ և նույնիսկ հրավիրում է նրանց բաց պարապմունքների, որպեսզի նրանք կարողանան տեսնել, թե երեխան ինչպես է զարգանում:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր մարդ ունի իր իրավունքները և կարող է պաշտպանել իր իրավունքներն ու արժանապատվությունը: Երեխաները նույնպես ունեն իրավունքներ: Սակայն ի տարբերություն մեծահասակների, միշտ չէ, որ նրանք ի վիճակի չեն պաշտպանել իրենց իրավունքները: Այստեղ մեծ նշանակություն ունի մեծահասակների վերաբերմունքը, նրանց մոտեցումը: Երեխաների իրավունքների պաշտպանության հարցում մեծ դեր ունի պետությունը, նախ և առաջ այն պետության խնդիրն է, որը հստակ օրենքներ ու իրավական ակտեր ունի երեխաների պաշտպանության համար, ինչպես նաև ունի շատ այլ կազմակերպություններ ու լծակներ, որոնք ցուցված են կատարելու դրանք:

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցում մեծ նշանակություն ունի ընտանիքը: Նա է համարվում երեխաների իրավունքների հիմնական պաշտպանը և մեծ մասով նրա վերաբերմունքից է կախված երեխայի դերն ու նշանակությունը հասարակության մեջ:

Երեխաների իրավունքների պաշտպանության և այն իրագործելու նպատակով հարկավոր է, որ պետությունն իր լծակներով կարողանա ճիշտ համագործակցել ու իրականացնի երեխաների պաշտանությունն ու իրավունքների պահպանման ուղղված ցանկացած միջոցառում՝ ի շահ երեխայի իրավունքների ու արժանապատվության պահպանման (դպրոց, մանկապարտեզ և այլն):

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ սահմանադրություն:
- ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են երեխաների իրավունքների պաշտպանությանը, նրանց կյանքի ու արժանապատվության պահպանմանը:
- Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա:
- <<Կրթության մասին>> ՀՀ օրենք:
- <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենք:
- Նախադպրոցական կրթության հիմնական կրթական ծրագրեր: